Արձանագրություն N4

<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24>> ծածկագրով ԳՀ ընթացակարգով հայտարարված գնման ընթացակարգի հայտերի գնահատման հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր

06 սեպտեմբեր 2022թ.

ժամը 11:00

*Մասնակցում էին հանձնաժողովի*
*նախագահ՝ Ռ.Եղիազարյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*
*անդամներ՝ Ն.Խաչատրյան - համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ*
*Առաքելյան Գոռ– համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ*
*Բաբախանյան Զոհրաբ– համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ*
*Սարգսյան Լիլիթ- համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ*
*քարտուղար՝ Ա.Ավետիսյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ*

1. *ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24 ծածկագրով ընթացակարգին նախնական ներկայացված գնային առաջարկների մասին*

---

1.1 ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24 ծածկագրով ընթացակարգին մասնակիցների կողմից նախնական ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափաբաժնի անվանումը և գնման գինը | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր |
|---|---|---|---|---|
| 1. *<<Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցներում ջրահեռացման առուների հիմնանորոգման աշխատանքներ>>-* 79 120 640 | <<Մինասյաններ Շին>> ՍՊԸ | 65 800 000 | 13 160 000 | **78 960 000** |
| | <<Գլավդորստրոյ>> ԲԸ | 65 875 000 | 13 175 000 | **79 050 000** |
| | <<Տուրիստաս>> ՍՊԸ | 65 924 150 | 13 184 830 | **79 108 980** |

2. *<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների վարման վերաբերյալ*

---

2.1 Գնման առարկա է հանդիսանում << *Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցներում ջրահեռացման առուների հիմնանորոգման աշխատանքներ*>>-ը:

2.2 <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցները հրավիրվել էին բանակցությունների՝ ***06.09.2022թ. ժամը 11:00***-ին:

**2.3 Միաժամանակյա բանակցություններին ներկա էին <<Մինասյաններ Շին>> ՍՊԸ-ի տնօրենը և <<Տուրիստաս> ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Վերջիններս վերանայեցին իրենց գնային**

առաջարկները, որի արդյունքում պայմանագրի կատարման համար ամենացածր գնային առաջարկ ներկայացրեց <<Մինասյաններ Շին>> ՍՊԸ -ն:

*Վերանայված գնային առաջարկը սփորև՝*

| Չափաբաժինների համարները | Աշխատանքի անվանումը | <<Մինասյաններ Շին>> ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|
| | | **Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/** | **ԱԱՀ**** **/տառերով և թվերով/** | **Ընդհանուր գինը** **/տառերով և թվերով/** |
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | **<< Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցներում ջրահեռացման առուների հիմնանորոգման աշխատանքներ>>** | 55 833 333 | 11 166 667 | 67 000 000 /վաթսունյոթ միլիոն/ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

### 3. *<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24>> ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի մասին*

3.1.Գնահատող հանձնաժողովի որոշմամբ.

<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24>> ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել **<<Մինասյաններ Շին>> ՍՊԸ-ն**՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

### 4. *<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24>> ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին*

Հանձնաժողովը որոշեց՝
3.1Հաստատել **<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-22/24>>** ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3.2 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի /10 օրացուցային օր/ ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:
3.3 Անգործության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **5 աշխատանքային օրվա ընթացքում,եթե ներկայացվելու է տուժանք և** 10 աշխատանքային օրվա ընթացքում,եթե ներկայացվելու է բանկային երաշխիք, ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման**

գնի 15 տոկոսի չափով: Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ հատկացված ֆինանսական միջոցների մասով, երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

| Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը | Ստորագրությունը |
|---|---|
| *Նախագահ՝ Ռ.Եղիազարյան* | |
| *Անդամներ՝ Ջ.Բաբախանյան* | |
| *Լ.Սարգսյան* | |
| *Գ.Առաքելյան* | |
| *Ն.Խաչատրյան* | |
| *Քարտուղար՝ Ա.Ավետիսյան* | |